Հավելված 4

ՆԱԽԱԳԻԾ

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-11/9-14/25**

ք.Երևան ----. -------------. 2014թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս գործերի կառավարիչ --------------------------, որը գործում է ՀՀ կառավարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «----------» --ն՝ ի դեմս --- -----------------, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սարքերի և սարքավորումների նորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Գնման առարկայի բնութագիր-գնացուցակի պահանջների:

1.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:

**2. Մատակարարման պայմանները (Գնման ժամանակացույց)**

2.1. Պայմանագրով նախատեսված Ծառայությունների կատարման վերջնաժամկետ է սահմանվում 2014 թվականի դեկտեմբերի 24-ը:

2.2. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի սարքը կամ սարքավորումը Կատարողի սպասարկման կետում գրանցվելու օրվանից հաշված առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2.3. Կատարողի մոտ պահեստամասի բացակայության դեպքում, Պատվիրատուի համաձայնությամբ, կարող է սահմանվել ծառայության մատուցման այլ ժամկետ՝ առավելագույնը երեսուն աշխատանքային օր:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի մատուցած Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

3.1.2. Ծառայությունները Պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատուցելու դեպքում հրաժարվել դրանից, եթե Պայմանագրի 2.2. կետում նշված ժամկետը խախտվել է 5 օրացուցային օրից ավելի.

3.1.3. Չընդունել Ծառայությունը, եթե այն չի համապատասխանում Պայմանագրի հավելված N1-ով սահմանված գնման առարկայի բնութագրի պահանջներին՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող որակի Ծառայությունով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 7.2. կետով նախատեսված տույժը և 7.3. կետով նախատեսված տուգանքը.

3.1.4. Եթե մատուցվել է տեսակի պայմանի խախտմամբ Ծառայություններ, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի պայմանին համապատասխանող Ծառայությունը և հրաժարվել մնացած Ծառայություններից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ծառայություններից և պահանջել վճարելու Պայմանագրի 7.3. կետով նախատեսված տուգանքը.

գ) պահանջել տեսակի պայմանին չհամապատասխանող Ծառայությունների անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ծառայություններով.

3.1.5. Կատարողի կողմից կատարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ծառայության կատարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 7.2. կետով նախատեսված տույժը.

3.1.6. Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ծառայություն՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ծառայությունն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7. Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողը խախտել է Պայամագրի 3.1.3. կամ 3.1.5. կետերով սահմանված ժամկետները:

3.1.8. Զննել Ծառայության արդյունքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

**3.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1. Կատարել Պայմանագրին համապատասխան Ծառայության մատուցումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2. Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատուցված Ծառայությունն ընդունելու դեպքում Պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում, Կատարողի պահանջով՝ Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.3. Ծառայությունների քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ծառայության բնույթից և նշանակությունից:

**3.3 Կատարողն իրավունք ունի՝**

3.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.3.2 Պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4. Կատարողը պարտավոր է՝**

3.4.1. Պատվիրատուին մատուցել Ծառայությունը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2. Կատարել Ծառայության մատուցման վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում Պայմանագրի պայմաններին:

3.4.3. Ծառայությունը մատուցել գնման առարկայի բնութագրին համապատասխան:

3.4.4. Ծառայության արդյունքը Պատվիրատուին մատուցելիս՝ նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Ծառայության արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5. Պատվիրատուին մատուցել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ծառայություն:

3.4.6. Պատվիրատուի պահանջով տրամադրել Ծառայության որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.7. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 7.2. և 7.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

**4. Ծառայության գինը և վճարման կարգը**

4.1.Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ոչ ավելի, քան -------- (-----------) ՀՀ դրամ: Ծառայությունների գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ծառայությունների մատուցման գները կայուն են և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գները:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամսում (եթե արձանագրությունն կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

**5. Ծառայությունների որակը և երաշխիքը**

5.1 Կատարողը երաշխավորում է մատուցված Ծառայության որակի համար:

5.2 Եթե ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**6. Ծառայությունների հանձնման և ընդունման կարգը**

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Կատարողը Ծառայության մատուցման ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայությունների կամ դրա առանձին փուլերի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունները համապատասխանում են Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ծառայությունները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Կատարողը պատասխանատվություն է կրում մատուցված Ծառայությունների որակի և Պայմանագրով նախատեսված՝ կատարման ժամկետների պահպանման համար:

7.2 Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի գնի 0.1%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Պայմանագրի 1.1 կետում նշված Գնման առարկայի բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 1,0%-ի չափով:

7.4 Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1%-ի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը** (**ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ**)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1. Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Պայմանագիր ստորագրած Կողմի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.2. Պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

9.3. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը Պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

9.4. Կատարողը պարտավոր է Պայմանագրի ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

9.5. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.6. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

9.7. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.8. Պայմանագրի հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագիրը (ներառյալ հավելվածները) կազմված է ---- (--------) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

ՀՀ կառավարության աշխատակազմ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցեն՝ gnumner@gov.am

---------------------------------
/ Ս. Բաղինյան /
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

-----------------------------------
/ ------------------------ /
Կ.Տ

*Հավելված N 1.*
*«------» --------------- 2014թ. կնքված*
*N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-11/9-14/25*
*գնման պայմանագրի*

# ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Գնման առարկայի բնութագիր-գնացուցակ

### Պատճենահանման սարքեր և սարքավորումներ

| Հ/հ | Ծառայության անվանումը | Չափաբաժին 1 | | Չափաբաժին 2 | | Չափաբաժին 3 | | Չափաբաժին 4 | | Չափաբաժին 5 | | Չափաբաժին 6 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | HP LJ P2015, P2035, P2055, P3015 լազերային, ցանցային տպիչ սարքերի նորոգում | | Canon LBP 2900, 3010 և HP LJ 1010, 1018, 1020 լազերային տպիչ սարքերի նորոգում | | CANON MF 4580dn, 4140/4100, 3110, 3220 բազմաֆունկցիոնալ լազերային տպիչ սարքերի նորոգում | | Lexmark c530dn, HP LJ CP 3505dn, HP LJ 5550dn լազերային գունավոր տպիչ սարքերի նորոգում | | Xerox documate 632 և EPSON GT 2500 սկաներների նորոգում | | KYOCERA KM 4050 բազմաֆունկցիոնալ լազերային տպիչ սարքի նորոգում* | |
| | | Գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | | | | | |
| | | թվերով | տառերով | թվերով | տառերով | թվերով | տառերով | թվերով | տառերով | թվերով | տառերով | թվերով | տառերով |
| 1 | Դիագնոստիկա և եզրակացության տրամադրում | | | | | | | | | | | | |
| 2 | Պրոֆիլակտիկա, ընդհանուր կարգավորում և մաքրում | | | | | | | | | | | | |
| 3 | Ծրագրային խնդիրների լուծում | | | | | | | | | | | | |
| 4 | Սնուցման համակարգի նորոգում | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Վառարանի նորոգում | | | | | | | | | | | | |
| 6 | Մայր տպասալիկի նորոգում /պարզ ռադիոդետալների փոխարինում/ | | | | | | | | | | | | |
| 7 | Մայր տպասալիկի նորոգում /միկրոսխեմաների, չիփսեթների փոխարինում/ | | | | | | | | | | | | |
| 8 | Մայր տպասալիկի փոխարինում /ներառյալ տպասալիկը/ | | | | | | | | | | | | |
| 9 | Սնուցման տպասալիկի փոխարինում /ներառյալ տպասալիկը/ | | | | | | | | | | | | |
| 10 | Էլեկտրական սարքերի (անջատիչ, տվիչ, հովացուցիչ և այլն) փոխարինում | | | | | | | | | | | | |
| 11 | Թղթի մատուցման ռետինե անվակների փոխարինում | | | | | | | | | | | | |
| 12 | Մեխանիկական դետալների (անվակ, գլանակ, լիսեռ և այլն) փոխարինում | | | | | | | | | | | | |
| Ընդամենը /ըստ չափաբաժինների/ | | | | | | | | | | | | | |

*6-րդ չափաբաժնի ծառայությունները պետք է մատուցվեն տեղում՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

## Համակարգչային սարքեր և սարքավորումներ

| Հ/հ | Ծառայության անվանումը | Չափաբաժին 7 | Չափաբաժին 8 | Չափաբաժին 9 | Չափաբաժին 10 | Չափաբաժին 11 |
|---|---|---|---|---|---|---|
| | | socket LGA 775, DDR 2 համակարգիչների նորոգում | socket LGA 1155, DDR 3 համակարգիչների նորոգում | LCD մոնիտորների նորոգում | Sony Vaio 15.6” և համարժեք դյուրակիր համակարգիչների /նոթբուքների/ նորոգում | 600ից-800VA, AVR UPS անխափան սնուցման սարքերի նորոգում |
| | | Գինը /ՀՀ դրամ/ | | | | |

| | | թվերով | տառերով | թվերով | տառերով | թվերով | տառերով | թվերով | տառերով | թվերով | տառերով |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Դիագնոստիկա և եզրակացության տրամադրում | | | | | | | | | | |
| 2 | Պրոֆիլակտիկա, ընդհանուր կարգավորում և մաքրում | | | | | | | | | | |
| 3 | Ծրագրային խնդիրների լուծում | | | | | | | | | | |
| 4 | Սնուցման համակարգի նորոգում | | | | | | | | | | |
| 5 | Մայր տպասալիկի նորոգում /պարզ ռադիոդետալների փոխարինում/ | | | | | | | | | | |
| 6 | Մայր տպասալիկի նորոգում /միկրոսխեմաների, չիփսեթների փոխարինում/ | | | | | | | | | | |
| 7 | BIOS-ի մարտկոցի փոխարինում | | | | | | | | | | |
| 8 | Պրոցեսորի հովացուցիչի փոխարինում | | | | | | | | | | |
| 9 | Արտաքին սնուցման բլոկի կամ լիցքավորիչի նորոգում | | | | | | | | | | |
| 10 | DVD-RW փոխարինում | | | | | | | | | | |
| 11 | Մայր տպասալիկի փոխարինում /ներառյալ տպասալիկը/ | | | | | | | | | | |
| 12 | Օպերատիվ հիշողության մոդուլի RAM փոխարինում /1GB, նվազագույն MHz/ | | | | | | | | | | |
| 13 | Էկրանի /մատրիցայի/ շլեյֆի փոխարինում | | | | | | | | | | |
| Ընդամենը /ըստ չափաբաժինների/ | | | | | | | | | | | |

*Ծառայությունների գները ներառում են դրա ընթացքում օգտագործվող բոլոր նյութերի ու պահեստամասերի գները*

1. Ծառայությունների մատուցման ժամանակ փոխարինված պահեստամասերի կամ այլ սարքավորումների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից Ծառայությունն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 180 օրացուցային օրը:

2. Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի սարքավորումը Կատարողի սպասարկման կետում գրանցելու օրվա և ժամի մասին:
3. Եթե Պատվիրատուին հայտնի չէ սարքի կամ սարքավորման անսարքության պատճառը, ապա Կատարողը իրականացնում է դիագնոստիկա և եզրակացություն է տրամադրում Պատվիրատուին, որից հետո Պատվիրատուն, ելնելով նպատակահարմարությունից, իր հայեցողությամբ, դադարեցնում կամ հանձնարարում է կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված, իր կողմից մատնանշված ծառայության մատուցումը:
4. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի սարքը կամ սարքավորումը Կատարողի սպասարկման կետում գրանցվելու օրվանից հաշված առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում: Կատարողի մոտ պահեստամասի բացակայության դեպքում, Պատվիրատուի համաձայնությամբ, կարող է սահմանվել ծառայության մատուցման այլ ժամկետ՝ առավելագույնը երեսուն աշխատանքային օր:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ կառավարության աշխատակազմ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցեն՝ gnumner@gov.am

-----------------------------------
/ Ս. Բաղինյան /
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

-------------------------------------
/ --------- /
Կ.Տ

*Հավելված N 2.*
*«------» ---------------- 2014թ. կնքված*
*N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-11/9-14/25*
*գնման պայմանագրի*

## Սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայություններ

## Վճարման ժամանակացույց*

հազար ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ. որում | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա-մենը Տարի |
| 1. | Սարքերի և սարքավորումների նորոգման ծառայություններ | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | **100%** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
ՀՀ կառավարության աշխատակազմ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցեն՝ gnumner@gov.am

--------------------------------
/ Ս. Բաղինյան /
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«

-----------------------------------
/ ---------- /
Կ.Տ

*Հավելված N 3.*
*«--------» ------------------- 2014թ. կնքված*
*N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-11/9-14/25*
*գնման պայմանագրի*

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ
ՀՀ կառավարության աշխատակազմ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<__________________>> 2014թ.
Պայմանագրի անվանումը՝ ՀՀ կառավարության աշխատակազմի կարիքների համար սարքերի և սարքավորումների նորոգման ծառայությունների մատուցման
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «-------» ----------------, 2014թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-11/9-14/25
Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ կառավարության աշխատակազմի գործերի կառավարիչ ------------- և Կատարողը՝ ի դեմս__________________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _________ 2014թ-ից __ _________ 2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամա-նակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են

Աշխատանքը հանձնեց

_______________________________
ստորագրություն

_______________________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Աշխատանքն ընդունեց

_______________________________
ստորագրություն

_______________________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.